այժմ վերստին շարժեցան յուզել զխնդիրն զայն, որպէս յայտ առնեն յետագայ բանք հրովարտակին, զոր գրեալ է Մէլիք Զահր Սէյֆի Ահմէտ, առ կուսակալն Պաղեստինոյ · օրինակ զայս։

Յայտնի է ձեզ հրովարտակն զոր յառաջագոյն գրեցաք, թէ յանդիման եղեւ մեզ աստ յատենի մերում դեսպան թագաւորին Վրաց · վասն արքունի գործոց ինչ։ Եւ մեկնեալ աստի դնաց յԵրուսաղէմ · և սկսաւ անդ հակառակիլ և բանանալ 'ի վերայ ազգին Հայոց յաղագս վանաց Ս · Յակոբայ սեփհականութեան նոցին։ Եւ նոքա յանդիման եղեն մեզ աստ առենիս և մատուցին զհրովարտակս և զմուրհակս առաջի դատաւորաց և մեծամեծաց քաղաքիս, յորս յայտնապէս տեսանիւր թէ՝ գործն է հաստատուն և աւարտեալ իրաւամբ և արդարութեամբ՝ զերծ յաւելաբանութենէ և 'ի ստութենէ։ Եւ հանրագիր 'ի բազմամբոխ ժողովրդոց՝ մատուցեալ առ թագաւորն · յորում ճառէր գնչմարտութիւն իրին · գրեալ ճշմարտութեամբ և ուղղութեամբ 'ի փառս միոյն Աստուծոյ, որ ունէր օրինակ զայս։

«Դատաւորք և գիտնականք և մեծամեծք Երուսաղէմի, եւ այլ մեծ և փոքր բազմութիւն ժողովրդոց 'ի մի վայր գումարեալ դնացաք 'ի վանս Ս · Յակոբայ, որ է սեփհականութիւն ազգին Հայոց · յայտնել և ստուգել զգործն։ Ժողովեցան անդ ժողովուրդք 'ի Հայոց և 'ի Վրաց, առաջի դեսպանի թագաւորին Վրաց։ Հայք մատուցին զհրովարտակս եւ զմուրհակս՝ զորս ունէին 'ի ձեռս իւրեանց, յորս յայտնապէս գրեալ և ծանուցեալ էր թէ վանք Ս · Յակոբայ է սեփհականութիւն իւրեանց, և ինքեանք ժառանգեալ են մինչեւ ցայսօր ժամանակի»։ Յետ այնորիկ հարցումն եղեւ և դեսպանին թէ՝ ունի՞ք և դուք զայսպիսի գիրս յաղագս Ս · Յակոբայ յայտարար իրաւանց ձերոց։ Իսկ դեսպանն ոչ կարաց մատուցանել գիրս ինչ 'ի հաստատութիւն եւ 'ի վկայութիւն իրաւանց ազգին Վրաց, առաջի բազմութեան ժողովոյն։

Յետ այսր դատաստանի և քննութեան՝ վերստին եկն դեսպան 'ի թագաւորէն Վրաց, և յանդիման եղեւ մեծի ատենիս՝ դարձեալ յաղագս վանաց Ս · Յակոբայ · և մեք հրամայեցաք գրել հրովարտակ վասն այնր։ Եւ 'ի նմին